Կատարինէ Սահակեան . . . 1
Մաշադի Աբբաս Մահմէտեան . 15
Ցովսէփ Ղևոնդեան և իւր կինն . 10
Տիրուհի Մարիամ Տէր Ցովսէփեան .
և իւր որդիքն . . . 30
Մարգար Սիմէօնեան և իւր տիկինն . 20
Ներսէս Վարդանեան . . . 1

(Մնացեալն է յետոյ):

## ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ
## ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ
## ԵՒ
## ՏԱՐԵԴԱՐՁ
## Ս. ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ.

Ի 27-ն ամսոյս՝ յաւուր Շաբաթու՝ ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի Անուան տօնախմբութիւնը եւ Ս. Գէորգեան ճեմարանի առաջին Տարեդարձը արժանաւոր հանդիսիւ կատարուեցաւ։

Այս առթիւ՝ զկնի Ս. Պատարագի՝ ի ճեմարանի կատարուած հանդէսի*) ժամանակ՝ Վերատեսուչ Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այվազեանցի՝— որ եւ ի նոյն աւուր Պատարագիչ եղաւ՝ —կարդացած հետեւեալ պատուական եւ ուշադրութեան արժանի ճառը արժան եւ կարեւոր կհամարիմք հրատարակել։

(*) Ուր եւ Պաշտօն կատարուեցաւ վասն հոգւոց ի Տէր հանգուցեալ ծնողաց Հիմնադրի ճեմարանիս Վեհ. Հայրապետի, եւ ամեն տարի պիտի կատարուի։

### ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ.

«Օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոյ».

Բոլորեցաւ ահա տարի մի ողջոյն, յորմէ հետէ Ձերովդ փոյթեռանդն խնամակալութեամբ և Հայրապետական օրհնութեամբ, և բարեհաճ հրամանաւ Օգոստափառ Կայսեր ամենայն Ռուսաց, կատարեցաւ բազմապայծառ հանդիսիւ բացումն Ճեմարանիս Սրբոյ Էջմիածնի ի մխիթարութիւն Հայաստան ժողովրդոց՝ հրաւիրելոց առ ի Ձերմէ իմաստութենէդ բարձր քարոզութեամբ ի վայելումն հոգեկան և մտաւորական խրախճանութեանց՝ զորս պատրաստէ Աջ Ձեր ի նորակառոյց տաճարիս՝ «Օրհնեսցի՛ ուրեմն, Վեհափառ Տէր, պսակ տարւոյ քաղցրութեան քո»։

Այս պսակ շքեղաշուք՝ ոչ յոսկւոյ և յարծաթոյ և յականց պատուականաց շարահիւսեալ փայլէ ի ճակատ մերոյ Վեհապետիդ, այլ ի Ձերմէ ճաճանչագեղ հաւատոյ Հարցն մերոց առաջնոց, յանդրդուելի յուսոյ ի նախախնամութիւն Բարձրելոյն և յեռանդագին սիրոյ առ Աստուած և առ ազգս մեր. պսակ արդարև յոյժ վայելչական ի զարդ Գլխոյդ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ Փոխանորդի Ճշմարիտ Գլխոյն Ընդհանրական Եկեղեցւոյ՝ Քրիստոսի Յիսուսի Փրկչին մերոյ. որոյ վասն արդեօք և ոչ անմասն ի փշատիպ չարչարանացն խոցուածոյ . . . Սակայն օ՛ն անդր ի բաց մերժեսցին այսօր զամ մի ի մտաց մերոց և ի բանից՝ տրտմականացն անցից յիշատակք ի վեհավայր տաճարի աստ որ իբրև զնոր փիւնիկ վերաթևեալ ի հրաբորբոք խարուկէ՝ ճախր առնու վերստին յԱրարատեանս դաշտի Ձերովդ ձգամբ և սիրասուն որդեկացդ ձեռնտու օժանդակութեամբ. Մոռացո՛նք եղիցին և դառնութեան լեղւոյն և քացախի զոր արբէքն յայնժամ և քամեցէք, և պարարեսցին միտք մեր աններկմիտ յուսով միայն ուղխիցն փափկութեան՝ զորս տացէ Տէր Ձեզ և մեզ առ հասարակ ըմպել ուրախութեամբ և ի տանս իւրում և յերանաւէտ օթևանս երկնիցն Արքայութեան։

«Օրհնեսցի՛ ուրեմն,—գոչեսցեն ընդ մեզ որդիք Հայաստանի,— օրհնեսցի պսակ տարւոյ

քաղցրութեան քոյ,, եւ կրկնեսցեն որ զմօք լերինքս Աստուծոյ, ,,Օրհնեալ օրհնեսցի,,,

Բայց Դուք, ո՛ Աստուածարեալ Հայրապետ առ ի՞նչ արդեօք եւ կամ յորմէ՞ շարժեալ խորհրդոյ՝ թեւակոխեցէք ի գործոյս մեծի ձեռնարկութիւն՝ առ ոտն հարեալ զամենայն խոյս եւ զխոյթ նեղութեան, ունայն արարեալ զդժուարութիւնս անթիւս գործոյդ կատարման եւ չեւլոյն առնելով զդժուարութիւնս՝ ոչ միայն յանձնախանձ եւ յողջամիտ ոգւոյ զխնդրոց ոմանց եւ անդիմաց յորդորից թելադրեալս: Զի՞ ահա՞ն արդեօք ժառանգիցէք անուն յանգաւոր կենդաղուն՝ իբրու քար ի քարի վերայ կուտակելով եւ յամլայացեալ ոտին Մասեաց շինուած այսպիսի մեծագործ կառուցանելով, որ դէս երբեմն Փարաւոնեանքն արարին՝ յանապատին Լիբիոյ դհաստարեան եւ դարձրաբերձ բրգունս կանգնելով, եւ որ վասն ձեռն ի գործ արկեալ էին՝ այնմ՝ չեղեն արժանի, եւ անուանք նոցա անհետացեալ կորեան ի միջոյ: Կամ զի՞ շահս ինչ ազգիս նեղութեանց առաւել քաղիցէք՝ իբր ի գործարանէ ուսմնց մեծէ բարւոյ ոսկւոյ եւ ործաթոյ, որպէս մերուն շահաւէտ լինի դարու մարդիկն սափրեցին առնել ի տեղիս տեղիս: — Բան եւ մի լիցի երբէք: — Այլ զի՞նչ: —

Ներեսցէ ինձ Ձերդ Վեհափառութիւն թարգմանել հաւատարիմ՝ թէեւ ոչ պերճախօս՝ հանդիսանալ աստանօր առաջի սրբազան պատկառելի Ժողովոյս, եւ համօրէն իսկ համազգի եղբարց Ձերոց վեհանձնական գիտաւորութեանց եւ բարձրաձիգ աշխարհաշէն մտածմանց:

Ամբարձեալ Աստուածընտիր Հայրապետիդ մերոյ սրտեռանդն հրաւիրանաւ, լուսութեան Ազգիս Հայոց ի Գերագահդ այդ Աթոռ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին ի բարձրագոյնակ կողմէ այս իբր ի սպիտակափառ յամբարձ բարձրութեանց մեծի լերինն Մասեաց՝ տեսանելով անտի շուրջանակի զխոնարհս խոնարհս Հայաստանեայց զգունդս որ շատ եւ որ սակաւ վարատական սփռեալս ընդ ամենայն աշխարհ՝ ընկղմեալս տակաւին ի մէգ եւ ի մթայլ տգիտութեան՝ մօրն ամենայն աղետից հոգեկանաց եւ մարմնականաց — եւ այն ի ժամանակի՝ յորում ազգք եւ ազինք որ ընդ ոլորտս տիեզերաց, մանաւանդ որք յարեւմտս կոյս Եւրոպայ, մանաւանդ որք հայաւորագոյնք են զմօք մեծեալ կան բիւրաւորք ժողովրդոց լայնածաւալ պետութեանս Ռուսիոյ ի լոյս պայծառութեան գիտութեանց եւ արուեստից եւ քաղաքակրթութեան զարգացման յառաջադէմ ընթացեալք՝ որ քան զոր բարգաւաճեն. — քաջ քաջ խելամուտ եղէք՝ զի ոչ այլազգ հնար է փանել փարատել յերեսաց ազգիս մերոյ զխաւարապատ զայն թանձրութիւն տգիտութեան, բայց մեծաւ իւիք արփիահրաշ լուսոյ ծագման պայծառութեամբ:

Եւ անդէն երկնեցէք ի միտս Ձեր զհեռատես խորհուրդ կառուցման Ճեմարանիս իբր զբազմաջահեան աշտանակի մեծի, յորում լուսաբորբոք վառիցին խարոյկք անշէջք պէսպէս գիտութեանց ի լուսաւորութիւն խուռն բազմութեան ժողովրդոց՝ ի Հայրապետական խնամս Ձեր հաւատացելոց: Իւր սորա ճշմարիտ է Աստուածպաշտութիւն՝ շող կաթեալ ի վերուստ անտի հրաշալեաւ իւր որ ազդեցեալ զհաշտեալ ընթացս յԱթոռոյ այսր Լուսաւորչին հօրց մերոց: Հարկ ի վերայ կայր պաշտօնեայս եւս պատրաստել արժանաւորս եւ հաւատարիմս, որք զնոյն զայն սրբալոյս ցանգ արկեալ զեղուցուն ի սրբավայր Ճեմարանիս ծրագրերանն:

Զայդ զայդոսիկ պաշտօնեայս ճշմարտապէս լուսաւորեալս եւ ջահաբորբոք լուսատու ազգիս Հայոց նկրտիք առ ա պատրաստել, Վեհափառ Տէր, ի հայաստանեայց մանկունս՝ յարգեաց եւ յաղագայից: Կամիք զի լիցին սոքա ճշմարտիւ արդարեւ արժանաւոր աշակերտք ընտրելագունիցն յաստուածընտիր Նախորդաց Ձերոց՝ հարց եւ Հայրապետաց, որք լցեալք հոգւով իմաստութեան, հոգւով երկիւղի Աստուծոյ, հոգւով գիտութեան ամենայնի որ ինչ կարեւորն իցէ ի պայծառութիւն Եկեղեցւոյ եւ ի բարգաւաճանս Հայաստան ժողովրդոց, գիտութեան զանազան լեզուաց հնոց եւ նորոց, գիտութեան բնականացն եւ աստուածաբանականաց, գիտութեան իմաստասիրականաց եւ համօրէն ամենայն ազգային եւ արտաքին մակացութեանց. զի այս իսկ է Ճեմարանիս անուն եւ խնկութիւն, եւ մի միայն կէտ նպատակի:

Քաղցր էր ինձ ապաքէն, Վեհափառ Հայրապետ, ի սոյն միտս յուսադրութեան յարմարել, և մխիթարեալ լուսոյն նմանութեամբ դիւրաջուարճ խնդութեան միայն ըմբոշխնել զվայելումն։ Սակայն աւա՜ղ, հարկ ի վերայ կայ ինձ և աշխատանաց իմոց շինուածոյ զսա նմանեցուցանել. մարտկոցի աւուր հզօրի և ամուր պատուարի կանգնեցելոյ ընդդէմ բուռն յարձակմանց ներքին և արտաքին թշնամեաց Եկեղեցւոյ մերոյ ուղղոյ։

Եւ ո՞վ արդեօք ներքինքն իցեն թշնամիք, եթէ ոչ դասք դասք որդւոց հարազատ կարծեցելոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, որք զթերութիւնս ումանց կամ զբազմաց իսկ ի մերոց եկեղեցական եղբարց զհամարէն եկեղեցականութեան ազգիս և զնուիրեալ իսկ զանարատ Եկեղեցին մերով ախորժեն շփել, և հիմն ի վեր զսա տապալել, և ի տեղւոջ սորա կանգնել կառուցանել՝ զի՞նչ, — ո՜հ մեծի ամբարշտութեանն — զրազինն կռել կոփել ինքնաթափաշարից ումանց մերոյ ժամանակիս և յանխորհրդոց ի հաւատոյս՝ յաճախելոցն յարևմտեան աշխարհս զօրէն իմն մերոյն Արտաշիսի Պարթևի որ յՀելլադա երբեմն ուրեմն արշաւել, և փոխանակ զողջամիտ իմաստնոյն Հելլենացւոց զիմաստասիրութեան արգասիս բարեաց ի Հայս փոխադրելոյ՝ զկուռս նոցին զանմռունչս ի մեր աշխարհս խաղաղացուցանէր թագաւորակն այն՝ զուգէ և բարեմիտ աշխարհական հեթանոս։ Սոքա ներքինք բառաջնում կարգի և փանդաւորայոյք արդեօք՝ որպէս բանիս կարգ է ասել՝ թշնամիք մերոյս Եկեղեցւոյ։ Իսկ զայլսն կնի երկրորդ ինձ ներեալ զաւնուսիկ անուանել, որք ի լուսմն լշուառութեանց ազգիս մերոյ հաստուածեալք զուր, և փայփայեալ առ ի մէնջ, և զհետ ստորոտեաց ումանց վարդապետութեանց զակատեալք, զազգային աւանդս ուղղութեան և բարեպաշտիկ ազգասիրութեան անգոսնեն և պախարակեն՝ իբրև զփուտս ինչ և ընկեցիկս սովորոյթս վաղնջուցն ժամանակաց։ Իսկ զարտաքնոցն մերոց ճառել թշնամեաց՝ յաւելեաց գրեցի ինձ համարի. քանզի ո՞վ ոք չգիտասցէ զպապական և զլուտերական քարոզչացն խարդախութեան հերձուածոյ՝ զազգակործան մեքենայագործութիւնս՝ տիրանալ անառիկ ամրոցի մերոյս Եկեղեցւոյ որ ինքն ըստ ինքեան մեծ է անյաղթելի ի դրանց դժոխոց։

Եւ ահա Տէրդ ո՜վ Աստուածարեալ Հայրապետ զնոյն մեր զԵկեղեցի նորոգս այսուիկ ամրակառոյց պարսպաւ պատսպարել հաստատմամբ արարէք. Քանզի ի կոչելն և ի բարգաւաճել Գէորգեան Ճեմարանին Աստուածային Տեսչութեանն հնարհիւ և Ձերովդ Հայրապետական խնամոք, այսուքէն ոչ ևս յաւիտեան աղաղակեն իցեն որդիք նորայս Իսրայէլի՝ թէպէտ կամեր իւրաքանչիւր զաւուսր իւր և զբերանն ժամարական, այլ ի հայեցապս յայս դաստակերտ իբր ի գործարան ամենայն հոգևորական կենաց և այլոց պիտոյից ազգիս և Եկեղեցւոյ։ Ո՞ր այն իցէ այնուհետև Արգելէս Պալանոս որ կեղծաւորութիւն յօժ ի տգիտութիւն անձինն խառնեալ՝ ամբաստանութիւնս անպարկեշտ զանարատ վարդապետութենէ հաւատոց մերոց կուտիցէ, կամ ո՞ր այն Լատինահայ ազգուրաց որ նախանձ իմն չար ընդ Պալանոսին ընկերով հիմնական ինչ խտիր ի մէջ արկանել յաւակնիցի ընդ մեր և ընդ ընդհանրական Եկեղեցին Քրիստոսի (զոր անհնարին տգիտութեամբ՝ մի համարիցի ընդ պապականին ամթոռոյ նորաձևութեանց), և կամ ո՞ր այն Թաղիցքի՝ նոր ումն յարուցեալ Արգելէս Պալանոս՝ ի մեր իսկ աւուրս յանդգնեսցի յանձամ չարաբանել այնպէս զմերս Եկեղեցւոյս առաջի աստուածարեալ արևելեան Եկեղեցւոյ՝ որպէս նախորդն իւր առաջի արևմտականին արար։ Եւ բնաւ իսկ ո՞ր այն Տուալթ և Զարեմպա և Տիմթրիկ և յաջորդք նոցին համարձակեսցին այնուհետև զրուցել լուտերաբար զԵկեղեցւոյ զեղծեցիկ կարգս աստուածպաշտութեան մերոյ։

Բայց այս չէ շատ, Վեհափառ Հայրապետ, այլ և հոգևորական ըեղմիս մերոյ պատուական Ճեմարանս այս եղիցի կենդրոն լուսաւորութեան և զանձարան հաւատարիմ անզրծկելի աւանդութեան, և որպէս լեռնային ստորոտեայց նշաւակելութեան հեռեւոյն և նախանձաւոր[illegible] ճախեսցէ թարգմանչացն մերոց երանելեաց[illegible], որք ի սմին յայսմ քաղաքի և ի տեղւոջ հաւաքեալ ամփոփեալ երբեմն էին ի շնորհատուն վայրի զա-

լալեզու ճոխութիւնս իմաստնոցն օտարաց՝ ի մերս կնաւին ընտրանաւ փոխաբերեցին։

Դարձեալ և ի նոցին իսկ յԵւրոպականացն ազգաց լեզուս քաջ ներհմտացեալք աշակերտեալքն ճեմարանիս, եկեսցէ ժամանակ՝ զի զմերոց ազգային աւանդից՝ զեկեղեցականացն և զքաղաքականաց՝ զստոյգ նկարագիրս առաջի արասցեն իմաստնոց նոցին, և ոչ ևս իշխեսցէ ոք ուրեք խրատմամբ իմն ճշմարտութեան ի ստուգապատում մատենագիրս մեր արկանել կամ զտանել, որպէս ոմանք յանզգաստիցն և ի հարևանցիկ հընախուզից ժամանակիս, —թէպէտև յազգայնոցն իսկ մերոց՝ և յայլմէ կողմանէ պատկառելի արանց՝ —յախուռն կարծիս և կասկածանս նիւթեցին ի մեր իսկ ստոյգ զանկեղծիկ հաւատարմութենէ առաջնոցն մերոց պատմագրաց, և մանաւանդ զանակնատու ճշմարտասիրութենէ և ըղմանրակրկիտ ընտրողութենէ քերթողահօրն իսկ մերոյ Մեծին Մովսիսի Խորենացւոյ, և զառաջնորդի նորա զՄար Իբայն Կատինայ, զանգին յիշատակարանն ընդ ստայօդս ինչ և ընդ առասպելաբան կեղծիս այլոց ոմանց աննշան ազգաց գրել ոչ զանգիտեցին։

Բայց ես զիա՞րդ ի սակաւամաննեայ բանից սահմանս զօրեցից արդեօք բովանդակել և զայլն ևս բիւրապատիկ արդասիս բարեաց, որոց ի ճեմարանէ աստի սրբոյ Աթոռոյդ իրաւամբ ըսպասէ ազգս մեր և աշխարհ և եկեղեցի, եթէ ոչ այժմիկ վաղվաղակի՝ սակայն աննշուշտ զկնի ամաց ինչ անցանելոյ՝ սովիմբ այսու գոգցես կարգաւորութեամբ և սոյնպիսեաւ տածողական անխոնջ խնամակալութեամբ Հայրապետիդ մերոյ մեծի։ Յայնժամ՝ ապա լիովին արդարացուցէ սա զիւրն անուանակոչութիւն՝ այժմէն տենչալի և անուշ հնչեցեալ յունկն ամենայն մերազնեայց, և պանծասցի յամս յամայր պսակեալ յոյժ արդարացի և յոյժ պատշաճական ըստ իս վերտառութեամբս «Գէորգեան Ճեմարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի»՝ ի հիացումն կարգեալ յաւերժաբար մերոցն և օտարաց։

Կեցցէ՛ ուրեմն Ձերդ Վեհութիւն՝ օրհնեալ և բարեբանեալ այսօր ի մէնջ և ի բովանդակ Հայկազեանս զրուցէ բանիւ սաղմոսերգուին՝ եթէ «Օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո»։ Կեցցէ՛ մինչև ցյիսներեակ յոբելենի գեղայօրէն տաճարիս իմաստութեան, և անդր ևս ընդ դարս յոլովս յանմահութիւն կնքեալ զԱնուն Ձեր և զմեծագործութիւն։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՅՐԵՑԵԱԼ ՄԱՍԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ.

(Շ–ր––ն–կ––թի–ն)։

### Ի ՍՈՒՐԲ ԽԱՉ ՔԱՂԱՔԻ (Մ–ն––)

| | |
|---|---|
| Առաքել Արզումանեանց | 10 |
| Ղարիպ Քովխայեանց | 10 |
| Գրիգոր Կուպեցեանց | 10 |
| Զաքարիա Ոսմանսեանց | 1 |
| Յարութիւն Թաղէոսեանց | 1 |
| Օհան Սարուխանեանց | 3 |
| Զաքէոս Ղնդիովեանց | 3 |
| Ղուկաս Գրիգորեան Ղարեանց | 1 |
| Վարազ Տէր Աւագեանց | 1 |
| Յաբէթ Հուամեանց | 1 |
| Աղէքսանդր Մարգարեանց | 1 |
| Մկրտիչ քահ. Խերումեանց | 1 |
| Գէորգ քահ. Աղայեանց | 5 |
| Յովսէփ քահ. Մուրդուզեանց | 3 |
| Զաքարիա քահ. Սերեբրակեանց | 1 |
| Յարութիւն Յօնանեանց | 1 |
| Աստուածատուր Աբրահամեանց | 1 |
| Մնացական Ղազարէկեանց | 1 |
| Աթանաս Դարալաղեանց | 1 |
| Ալէքսան Կարախանեանց | 1 |
| Դաւիթ Օնանեանց | 1 |
| Արի Յովսէփեան Զաքարեանց | 1 |
| Աղարէկ Աղստղալեանց | 1 |
| Զաքարիա Շխյարեանց | 3 |
| Աւագ Սարուխանեանց | 1 |
| Յովհաննէս Ճիկարխանեանց | 1 |
| Ոսկան Աղստղալեանց | 1 |
| Յարութիւն Էյվազեանց | 1 |
| Մակար Մարգարեանց | 1 |